ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/54

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Սլացք» ՓԲԸ
Երրորդ անձ՝ «Արման Սվազյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթ, բուլդոզերների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Սլացք» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել բուլդոզերների վերոնորոգման

ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.04.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/54 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.04.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Արման Սվազյան» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.05.2020թ.-ին:

2. <u>«Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սլացք» ՓԲԸ-ն 20.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար բուլդոզերների վերոնորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև Ընթացակարգ/:

Վերոհիշյալ ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Սլացք» ՓԲԸ-ն և Արման Սվազյան Ա/Ձ-ն:

<u>www.gnumner.am</u> կայքում առկա տվյալների համաձայն՝ հայտերի բացման նիստը պետք է տեղի ունենար 07.04.2020թ.-ին, սակայն մինչ օրս հայտերի բացման նիստի վերաբերյալ որևէ արձանագրություն չի կազմվել և չի ուղարկվել «Սլացք» ՓԲԸ-ին չնայած այն հանգամանքի, որ անցել է շուրջ 13 օր:

Չնայած այդ հանգամանքին, «Սլացք» ՓԲԸ-ն ուսումնասիրել է վերը նշված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, ինչի արդյունքում արձանագրվել է հետևյալը.

«Սլացք» ՓԲԸ-ն ուսումնասիրելով Արման Սվազյան Ա/Ձ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը, որոշել է Ա/Ձ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի թվային էլեկտրոնային ստորագրության վավերականության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով 11.04.2020թ. N 16 գրությամբ դիմել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ:

Վերջինիս կողմից տրված եզրակացության համաձայն՝ ի պատասխան վերոհիշյալ գրության տրվել է եզրակացություն այն մասին, որ Արման Սվազյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը /Հավելված 2/ ներկայացված 07.4.2020թ. պատշաճ ստորագրված չէ: Ելնելով վերոգրյայից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը 41-րդ կետը, գտնում ենք, որ վերջինիս հայտը պետք է մերժվի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Ընթացակարգի հրավերի համաձայն՝

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ մասնակցի հայտում՝ թիվ 2 հավելվածում գնային առաջարկում անհամապաասխանություն արձանագրվելու դեպքում հայտը ենթակա է մերժման,

անկախ այն հանգամանքից, որ եթե առկա էլ. սփորագրության հետ կապված խնդիրների դեպքում հայտը ենթակա է շտկման, քանի որ տվյալ դեպքում առկա է գային առաջարկում անհամապատասխանություն, իսկ այս դեպքում հայտը պետք է գնահատվի անբավարար և մերժվի: Գտնում ենք, որ այս դեպքում հնարավոր չէ կիրառել Կարգի 41 կետը և տալ շտկելու հնարավորություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը չի կատարել ոչ մի գործողություն էլ. սփորագրության տվյալները պարզելու համար և այդ գործողությունները կատարվել են «Սլացք» ՓԲԸ-ի կողմից և հինք ընդունելով այն հանգամանքը, որ Արման Սվազյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի պարունակում վավեր թվային սփորագրություն, ինչը ապացուցվում է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրված գրությամբ, ինչպես նաև այն որ դեռևս չի հրապարակվել և կազմվել արձանագրությունը, ապա տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվի վերջինիս հայտը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել բուլդոզերների վերոնորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշում:

05.05.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար բուլդոզերների վերոեորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև Ընթացակարգ/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 2-րդ մասի 23-րդ կետի համաձայն՝ Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները, գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գնումներ մասին ՀՀ օրենքով սահմանված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթը հայտարարվել է առանց դրա իրավական հիմքի, այն է՝ www.gnumner.am համացանցային կայքում չի հրապարակվել նշված ծառայության մասով նախատեսված ծառայությունը գնումների պլանում: Սպինքն առկա չի եղել գնումների պլան, հետևաբար մրցույթը հայտարարվել է Օրենքի և Կարգի վերը նշված օրենսդրական նորմերի խախտումների:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նշված իրավական հիմքով կան արդեն իսկ կայացված որոշումներ, որոնցից մեկը քննված և 02.04.2020 թվականին կայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/35

համարի որոշումն է, որի արդյունքում գնումների պլանը ուշ հրապարակելու արդյունքում կայացվել է որոշում և մրցույթը հայտարարվել է չկայացած:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել բուլդոզերների վերոնորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել նույն մրցույթը չկայացած հայտարարելու մասին համապատասխան մասին որոշում:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 20.04.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5817-2020 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարության՝ հնարավորություն տալով «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 20.04.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 20.04.202. N /ԲՔԱ-ԼՕ/2/5817-2020 գրության՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ են ներկայացրել Արման Սվազյան Ա/Ձ-ն, Գարիկ Սաքանյան Ա/Ձ-ն և «ՍԼԱՅՔ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 07.04.2020թ. ժամը 10:00-ն: Քանի որ Ընթացակարգի չափաբաժինների քանակը չի գերազանցում յոթանասունհինգը, ուստի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 21-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ հայտերի բացման և գնահատման նիստը՝

ա) Կարգի 41-րդ կետի համաձայն՝ 09.04.2020թ. կասեցվել է մեկ աշխատանքային օրով՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկման անհրաժեշտությամբ պայմանավորված.

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կարգի 40-րդ կետի համաձայն՝ 16.04.2020թ. կասեցվել է բանակցություններ վարելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ժամկետի խախտում չի արձանագրվել:

Հայտերի գնահատման արդյունքում 16.04.2020թ. հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն Արման Սվազյան Ա/Ձ-ի հայտը, և վերջինս հրավիրվել է 21.04.2020թ. նշանակված բանակցություններին:

Միաժամանակ Կարգի 41-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝

ա) «հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.»,

բ) «բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները

կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:»:

Ելնելով վերոգրյալից հարկ եմ համարում նշել, որ գնահատող հանձնաժողովի կողմից Արման Սվազյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստթղթերը գնահատվել է պատշաճ ստորագրված: Սակայն եթե նույնիսկ «Էկենգ» ՓԲԸ կողմից տրված եզրակացության համաձայն նշված փաստաթղթերը պատշաճ ստորագրված չեն, ապա վերջինիս հայտը ենթակա է շտկման:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Արման Սվազյան» Ա/Ձ-ն 22.04.2020թ.–ին՝ ներկայացրած միջնորդության հիման վրա ներգրավվել է գործով որպես երրորդ անձ ս(այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Արման Սվազյան» Ա/Ձ-ն 13.05.2020թ.-ի ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 20.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/54 ծածկագրով բողոքը:

Գտնում ենք, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, արված եզրահանգումները չեն բխում հրավերի ուղղակի պահանջներից, իսկ բողոքի իրավական հիմքը սխալ է նշված, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները...:

ՀՀ քաղ.դատ. օր-ի 62-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Այսպիսով.

ա) «Սլացք» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ “Արման Սվազյան” Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկ հավելվածում էլ. ստորագրությունը վավեր չէ և գնահատող հանձնաժողովը պարտավոր է Ա/Ձ-ի հայտը մերժել:

Այս կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

✓ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Սլացք» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով ընդամենը վերացական հայտնել է, որ “Արման Սվազյան” Ա/Ձ-ի էլ. ստորագրությունը վավեր չէ՝ չներկայացնելով որևէ ապացույց վավեր ստորագրության խնդրի վերաբերյալ, արդյոք այդ խնդիրը կախված է եղել “Արման Սվազյան” Ա/Ձ-ի կողմից թույլ տրված անգործության հետևանքով թե ոչ:

✓ Եթե բողոքին կից առկա է <<էկենգ>> ՓԲԸ-ին արված հարցման գրության օրինակը և հետջաբար նաև ստացված պատասխանի օրինակը՝ խնդրում ենք ներկայացնել նաև մեզ:

բ) «Սլացք» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է նաև, որ թիվ 2 հավելված գնահին առաջարկում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հայտը ենթակա է մերժման, անկախ այն հանգամանքից, որ եթե առկա էլ. ստորագրության հետ կապված խնդիրների դեպքում հայտը ենթակա է շտկման, քանի որ տվյալ դեպքում առկա է գնային առաջարկում անհամապատասխանություն, իսկ այս դեպքում հայտը պետք է գնահատվի անբավարար և մերժվի /տես՝ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/54 բողոքի 3 էջ/:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված N 526-Ն որոշման /այսուհետև Կարգ/ Կարգի 41-րդ կետը սահմանում է հետևյալը՝ «41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:».

Ընթացակարգի հրավերի 8.9 կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը …:

Հրավերի 8.10 կետի համաձայն՝ սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Եթե հայտի գնահատման արդյունքում անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա այն համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Վերը նշված նորմերի կարգավորումից ուղղակիորեն հետևում է, որ նույնիսկ եթե գտնենք, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկ հավելվածում առկա է էլ. ստորագրության վավերականության խնդիր՝ ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Հրավերի 8.9 կետը, այն է, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով պետք է կասեցնի նիստը և այդ մասին տեղեկացնի մասնակցին՝ առաջարկելով մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչն էլ սահմանված ժամկետում "Արման Սվազյան" Ա/Ձ-ն կիրականացնի:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույն բողոքաբերն ինքն էլ է քաջածանոթ Հրավերի 8.9 կետին, քանի որ բողոքում նշել է հետևյալը՝ անկախ այն հանգամանքից, որ եթե առկա էլ. ստորագրության հետ կապված խնդիրների դեպքում հայտը ենթակա է շտկման, քանի որ տվյալ դեպքում առկա է գնային առաջարկում անհամապատասխանություն:

գ) «Սլացք» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով որպես բողոքի պահանջ նշել է հետևյալը. «Պարտավորեցնել բուլդոզերների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-բմծձբ-20-20/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել "Արման Սվազյան" Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշում»:

Մինչդեռ, «Սլացք» ՓԲԸ-ի բողոքով ներկայացված բողոքի իրավական հիմքի ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայացված իրավիճակի վրա չի կարող տարածվել ՓԲԸ-ի կողմից վկայակոչված պահանջը և առավել ևս գնահատող հանձնաժողովին չի կարող պարտավորեցվել Ա/Ձ-ի հայտը մերժելու որոշում, քանի որ բողոքով վիարկվող գնային առաջարկ հավելվածը՝ կոնկրետ էլ. ստորագրության մասով շտկման ենթակա փաստաթուղթ է /տես Հրավեր 8.9 կետ/:»:

Ելնելով վերոգրյալից, Երրորդ անձը Բողոքներ քննող անձին խնդրել է «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Միևնույն ժամանակ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվելու դեպքում, Բողոքներ քննող անձին խնդրել են կայացրած որոշմամբ մատնանշել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված թիվ 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանված պահանջի կիրառման անհրաժեշտությունը:

13.05.2020թ.-ին ներկայացված դիրքորոշման լրացմամբ, Երրորդ անձը հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 20.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/54 ծածկագրով բողոքը:

Ս.թ. մայիսի 5-ին «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է բողոքի լրացում, որի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի լրացումը անհիմն է, արված եզրահանգումները չեն բխում հրավերի ուղղակի

պահանջներից, իսկ պահանջը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները...:

ՀՀ քաղ.դատ. օր-ի 62-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Այսպիսով՝ «Սլացք» ՓԲԸ-ն ներկայացված բողոքի լրացմամբ որպես բողոքի իրավական հիմք նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը, 15-րդ հոդվածի 1-ին կետը, 15-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ և 17-րդ կետը:

Բողոքաբերը նշել է, որ www.gnumner.am համացանցային կայքում չի հրապարակվել նշված ծառայության մասով նախատեսված ծառայությունը գնումների պլանում, այսինքն առկա չի եղել գնումների պլան, հետևաբար մրցույթը հայտարարվել է Օրենքի և Կարգի վերը նշված օրենսդրական նորմերի խախտումներwv:

Վերը նշված հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ բողոքաբերի կողմից միտումնավոր կերպով փորձ է արվում ամեն գնով խոչընդոտներ ստեղծել, թե Պատվիրատուի, թե ընտրված մասնակցի և թե բողոքներ քննող անձի համար:

Մասնավորապես, տվյալ հանգամանքի համար հիմք է հանդիսանում բողոքաբերի գործողությունները, նախ ի սկզբանե բողոքաբերի կողմից ներկայացված պահանջով խնդրել էր բողոքներ քննող անձին պարտավորեցնել մերժել "Արման Սվազյան" Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, այնուհետև "Արման Սվազյան" Ա/Ձ-ի կողմից երրորդ անձ ներգրավելու և հետևաբար նաև բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմամբ բերված փաստերից՝ կարծես թե բողոքաբերի համար ակնհայտ էր դարձել, որ ներկայացված բողոքը չունի նման պահանջով բավարարվելու հնարավորություն՝ 05.05.2020թ. ներկայացվել է լրացում նոր իրավական հիմքով և պահանջով, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Սլացք» ՓԲԸ-ն տեսնելով, որ ներկայացված

գնային առաջարկի մեծ տարբերությամբ զիջում է “Արման Սվազյան” Ա/Ձ-ի կողմից ներկայացված ավելի մատչելի և Պատվիրատուի համար շահավետ գնային առաջարկին և հաշվի առնելով, որ “Արման Սվազյան” Ա/Ձ-ի ներկայացված հայտի փաթեթում առկա փաստաթղթերում առկա չէ որևէ անհամապատասխանություն, իսկ եթե անգամ առկա է անհամապատասխանություն, ապա այն ենթակա է շտկման, և այն, որ բաց է թողնվել բողոքներ քննող անձին ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին պահանջ ներկայացնելու ժամկետը, ուստի ՓԲԸ-ն բողոք է ներկայացրել բողոքներ քննող անձին “Արման Սվազյան” Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու հիմքով, որպեսզի բողոքը ընդունվի վարույթ և ապա բողոքի լրացմամբ փորձ է արվել մոլորեցնել բողոքներ քննող անձին և կատարել բողոքի այնպիսի պահանջ, որը ուղղակի հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության և Հրավերի պահանջները, քանի որ բողոքը ներկայացնելու պահին “Արման Սվազյան” Ա/Ձ-ն արդեն եղել է ընտրված մասնակից:

Իսկ ինչ վերաբերվում է բողոքի լրացմամբ բերված Գ. Ներսիսյանի նույն իրավական հիմքով կայացրած որոշմանը, ապա հայտնում ենք, որ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումները չեն կարող նախադեպային լինել և որպես հիմք դրվել բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից քննվող գործերի վերաբերյալ կայացրած որոշումների շրջանակներում, այն պարզ պատճառով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-ևդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

«Սլացք» ՓԲԸ-ն ներկայացված բողոքի լրացմամբ որպես բողոքի պահանջ նշվել է հետևյալը. «Բուլդոզերների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող

հանձնաժողովին պարտավորեցնել ընդունել նույն մրցույթը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշումը»:

Մինչդեռ, «Սլացք» ՓԲԸ-ի բողոքով ներկայացված բողոքի իրավական հիմքի ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայացված իրավիճակի վրա չի կարող տարածվել ՓԲԸ-ի կողմից վկայակոչված պահանջը և առավել ևս գնահատող հանձնաժողովին չի կարող պարտավորեցվել Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում ընդունելը, քանի որ վիճարկվող պահանջով բողոք կարող էր ներկայացվել միայն մինչև հայտերի բացման վերջնաժամկետը /տես Հրավեր 12.4 կետ/:

Հրավերի 12.4 կետի համաձայն, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում,

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ հայտերի բացելուց և ընտրված մասնակից որոշելուց հետո ընթացակարգի չեղարկումը այն հիմքով, որ ընթացակարգով նախատեսված ծառայությունը գնումների պլանում առկա չէ, այսինքն առկա չի եղել հրապարակված գնումների պլան, չի բխում Օրենքի և Կարգի պահանջներից: Գտնում ենք, որ եթե առկա է նման իրավիճակ (խնդիր Հրավերում՝ կապված գնումների պլանի հետ), ապա նման ընթացակարգը առավելագույնը պետք է վիճարկվի մինչև տվյալ ընթացակարգով հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը: Հակառակ դեպքում կստեղծվի շատ արատավոր մի պրակտիկա, որը կոտնահարի տնտեսվարողների շահերը և էական վնաս կպատճառի պետությանը:

Մասնավորապես, մասնակցած և չհաղթած մասնակիցները այս հիմքով կկարողանան չեղարկել ցանկացած մրցույթ, ինչը կխախտի պատշաճ մասնակցած և հաղթած ընկերությունների իրավունքները: Եվ միևնույն ժամանակ կչեղարկվեն պետության կողմից կազմակերպված և գրեթե ավարտին հասցրած մրցութները:

Հարգելի պարոն Օհանյան, հաշվի առնելով Ձեր մեծ փորձը իրավունքի ասպարեզում և Ձեր պետականամետ մոտեցումը պետական գնումների ոլորտում առկա հիմնախնդիրներին՝ խնդրում ենք տեղիք չտալ նման արատավոր պրակտիկայի արմատավորմանը, և նման հիմքով բողոքները քննության առարկա դարձնել բացառապես մինչը ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետը:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ բողոքի լրացման նման փաստական հանգամանքների պայմաններում Բողոքաբերի ներկայացված պահանջը իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության և Հրավերի պահանջներից:»:

Ելնելով վերոգրյալ, Երրորդ անձը Բողոքներ քննող անձին խնդրել է «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Բուլդոզեր S-170, S-130, Բ-10, S-10 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյունների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 50531100/6:

www.armeps.am/PPCM/ կայքում (https://armeps.am/ppcm/public/procurements) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Բուլդոզեր S-170, S-130, Բ-10, S-10 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյունների ձեռքբերման համար նշվել է 50531100/6, քանակը 1, իսկ գինը՝ 114 000 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ն և «Սլացք» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 07.04.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ և 2.2-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps

(www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի: Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Նույն արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 07.04.2020թ., և «Սլացք» ՓԲԸ-ն մինչև 08.04.2020թ. ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը, ուստի 16.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Սլացք» ՓԲԸ-ի հայտը:

Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ Գարիկ Սաքանյան Ա/Ձ-ի, մասնավորապես՝ վերջինիս կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է ընթացակարգի հրավերի՝ իր կողմից հաստատված թիվ 3 հավելվածը, այնինչ հայտի ապահովումը պետք է ներկայացվեր բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 09.04.2020թ. աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը և ծանուցել Գարիկ Սաքանյան Ա/Ձ-ին անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ուստի 16.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Գարիկ Սաքանյան Ա/Ձ-ի հայտը:

Նույն արձանագրության 3.3 կետի համաձայն՝ քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծակագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտերի գնահատման արգյու հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ 16.04.2020թ. Արման Սվազյան Ա/Ձ-ին ծանուցել է, որ գների նվազեցման նպատակով

21.04.2020թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կվարվեն բանակցություններ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 20.04.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և

արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն

հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել

միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով գործով ներգրավված անձանց ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Սլացք» ՓԲԸ-ն, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք և ներկայացնելով Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտին կից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2-ում) առկա ստորագրության ոչ պատշաճ կատարված լինելու հանգամանքի մասին որևէ վերաբերելի ապացույց, որով հնարավոր կլիներ հերքել և բացառել բողոքաբերի կողմից բողոքով բերված փաստական հանգամանքները: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում

ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտին կից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2-ում) առկա ստորագրության ոչ պատշաճ կատարված լինելու հանգամանքի մասին որևէ վերաբերելի ապացույց ներկայացնելու պարագայում անգամ, այդ փաստի վերաբերյալ ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի բավարարմանը:

Անդրադառնալով Ընկերության կողմից 05.05.2020թ.-ին ներկայացված բողոքի փոփոխությանը (իրավական հիմքերի և պահանջի), Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների

մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների

գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Բուլդոզեր S-170, S-130, Բ-10, S-10 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյունների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 50531100/6:

www.armeps.am/PPCM/ կայքում (https://armeps.am/ppcm/public/procurements) առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Բուլդոզեր S-170, S-130, Բ-10, S-10 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյունների ձեռքբերման համար նշվել է 50531100/6, քանակը 1, իսկ գինը՝ 114 000 000 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-20/1» ծածկագրով բաց մրցույթի

կազմակերպման իրավական հիմքը՝ պլանը, առկա է www.armeps.am/PPCM/ կայքում՝ (https://armeps.am/ppcm/public/procurements) հղմամբ, որի տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Բուլդոզեր S-170, S-130, Բ-10, S-10 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյունների ձեռքբերման համար նշվել է 50531100/6, քանակը 1, իսկ գինը՝ 114 000 000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից 20.04.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/54 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**